ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿ

ք. Երևան **---.----.---------- թ.**

«ԷՆԵՐՋԻ ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 08213062), ի դեմս տնօրեն՝ Դավիթ Աբովյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար), մի կողմից,

և

---------- (ՀՎՀՀ՝ ----------), ի դեմս ----------, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Սպառող), մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ,

ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ընդունված սույն ոլորտը կարգավորող որոշումներով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողի հասցեով մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Բաշխող	Էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձ.
Երաշխավորված մատակարար	էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի լիցենզիա ունեցող անձ
Հանձնաժողով	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Մատակարար	Էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձ.
Սպառող	էլեկտրական էներգիայի սպառման պահանջարկ ունեցող անձ, որն էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր է կնքել մատակարարման լիցենզիա ունեցող անձի հետ
Հաշվառքի սարք/ Հաշվիչ	Մեկ միակցության սարքվածքների համախումբ, որը նախատեսված է էլեկտրաէներգիայի (հզորության) չափման և հաշվառման համար, ներառյալ՝ էլեկտրական էներգիայի հաշվիչ կամ էլեկտրական էներգիայի հաշվիչի, հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների միացությունների համախումբ՝

	ստուգաչափված Չափագիտական մարմնի կողմից, առկայության դեպքում նաև՝ իմպուլսային տվիչները, մոդեմները, գումարիչները, դրանց միացնող հաղորդալարերը և ավտոնոմ էլեկտրական սնումը առնվազն 1,5 ժամի ընթացքում ապահովող անխափան սնման սարքերը
ԷԲՑ կանոններ	Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններ
ԷՄՇ կանոններ	Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրայինկանոններ.
ԷՄԱ կանոններ	Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններ.

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Մատակարարը պարտավոր է՝

1) Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա հետևյալ հասցեով՝

2) Մատակարարը Սպառողի կամ դիմող անձի գրավոր դիմումին տալիս է գրավոր պատասխան, բանավոր դիմումին՝ բանավոր պատասխան, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին պատասխանը տրվում է էլեկտրոնային փոստի միջոցով՝ դիմումն ստանալուց հետո (բացառությամբ՝ բանավոր) 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2. Մատակարարն իրավունք ունի՝

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում:

2) Սպառողի համար Պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման դեպքում դիմել Բաշխողին՝ սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելու նպատակով, նախօրոք, առնվազն 10 (տաս) օրացույցային օր առաջ այդ մասին ծանուցելով:

3.3. Սպառողը պարտավոր է՝

1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքը՝ Մատակարարի կողմից համապատասխան հարկային հաշիվը դուրս գրելուց 5 (հինգ) օրացույցային օրվա ընթացքում:

2) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում առնվազն 15 (տասնհինգ) օրացույցային օրվա ընթացքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և

Պայմանագիրը լուծելու համար:

3) Պայմանագիրը կնքելուց հետո 10 (տաս) օրացույցային օրվա ընթացքում փոխանցել Մատակարարին Հավելված 1-ի լրացման համար ամբողջական տվյալները և կնքել այն և/կամ Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի № 516-Ն և № 517-Ն որոշումներով սահմանված միացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, հակառակ դեպքում Մատակարարը իրավունք է ստանում՝

- չմատակարարել էլեկտրական էներգիա մինչև նշված տվյալների տրամադրման պահից 10 (տաս) օրացույցային օրվա ընթացքում:
- Կնքման պահից 1 (մեկ) ամիս նշված տեղեկատվության չտրամադրման դեպքում՝ միակողմանի լուծել Պայմանգիրը:

4) Գրավոր տարբերակով Մատակարարին տրամադրել տեղեկություն ինքնավար էներգաատադրության գործունեությամբ զբաղվելու մասին և ներկայացնել նշված գործունեության շրջանակում կնքված պայմանագիրը, ինչպես նաև առևտրային կանոններով պահանջվող այլ փաստաթղթեր արտադրող կայանը Առևտրային կանոնների համաձայն միկրոէներգաարտադրող ճանաչելու նպատակով:

5) Մատակարարին առնվազն 1 մեկ ամիս առաջ նախօրոք ծանուցել ենթասպառողների ավելացման կամ անջատման մասին՝ տրամադրելով համապատասխան տվյալները:

6) Պայմանագրի 5.1.1-րդ կետով սահմանված իրավիճակի ի հայտ գալու պարագայում Սպառողը, էլեկտրամատակարարման դադարեցմանը հաջորդող 1 օրացույցային օրվա ընթացքում պարտավոր է այդ մասին տեղեկացնել Մատակարարին:

3.4. Սպառողն իրավունք ունի՝

Պահանջել Մատակարարից կատարել օրենքով և Պայմանագրով սահմանված պարտականությունները:

4. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սպառված էլեկտրական էներգիայի արժեքը, որոշվում է հաշվարկային ամսում Շուկայի կառավարման ծրագրում գրանցված սպառման փաստացի ծավալի և 4.3.-րդ կետում նշված էլեկտրական էներգիայի արժեքի արտադրյալով բազմապատկելու միջոցով, որը պետք է փոխանցվի անկանխիկ եղանակով Պայմանագրի վավերապայմաններում նշված Մատակարարի հաշվեհամարին, համապատասխան հարկային հաշիվը դուրս գրելուց 5 (հինգ) օրացույցային օրվա ընթացքում:

4.1.1. Այն պարագայում, երբ բաշխողի կողմից ներկայացված բաշխված էլեկտրական էներգիայի քանակը տարբերվում է Մատակարարի կողմից ներկայացված մատակարարված էլեկտրական էներգիայի քանակից, սպառողը, որպես մատակարարված էլեկտրական էներգիայի քանակ, հիմք է ընդունում Մատակարարի կողմից ներկայացված քանակը:

4.1.2. Պայմանագրի 4.1.1-րդ կետի համար իրավական հիմք է հանդիսանում Հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 22-ի №ՄՄ/34.3-Մ4-9/5479-2024 գրությունը, որը համարվում է

պայմանագրի անբաժանելի մաս (Հավելված 2)։

4.2. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով, ԷՄԱ կանոնների և այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով։

4.2.1. Պայմանագրի 4.2.-րդ կետում նշված իրավիճակում հիմք է ընդունվում Բաշխողի կողմից ներկայացված էլեկտրական էներգիայի հաշվարկային քանակը։

4.3. Էլեկտրական էներգիայի արժեքը կազմում է՝ ---------- դրամ/կՎտժ (ներառյալ ԱԱՀ-ն)։

4.4. ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից շուկայում սահմանված սակագների փոփոխման դեպքում 4.3. կետով նախատեսված Պայմանագրի գինը ենթակա է համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ փոփոխման, ինչի կապակցությամբ Կողմերը պարտավորվում են կնքել լրացուցիչ համաձայնագիր Պայմանագրի 4.3. կետով սահմանված գնի փոփոխման վերաբերյալ։ Փոփոխության հետ Սպառողի անհամաձայնության պատճառով Պայմանագրի լուծման դեպքում, Պայմանագիրը համարվում է լուծված Սպառողի նախաձեռնությամբ։

4.5. Մատակարարին առնչվող սակագների սահմանման և/կամ փոփոխման դեպքում, Հանձնաժողովի կողմից որոշման նախագծի ստացման պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարը պարտավոր է տեղեկացնել գնի հնարավոր փոփոխության մասին Սպառողին, սպառողի կողմից առարկություններ չունենալու պարագայում կնքվում է լրացուցիչ համաձայնագիր 4.3. կետով սահմանված գնի փոփոխման վերաբերյալ։ Համապատասխան նախագիծը Հանձնաժողովի կողմից ընդունման դեպքում, Համաձայնագիրը կմտնի ուժի մեջ Հանձնաժողովի համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու պահին, իսկ Հանձնաժողովի կողմից նախագծի մերժման դեպքում ծանուցումը, ուղեկցող փաստաթղթերի հետ միասին կճանաչվի առոչինչ։ Իսկ փոփոխվող գնի հետ Սպառողի անհամաձայնության դեպքում՝ Սպառողը պարտավորվում է ծանուցումը ստանալուց 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Մատակարարին Պայմանագրի լուծման մտադրության մասին։ Տվյալ դեպքում լուծման համաձայնագիրը պետք է ուժի մեջ մտնի Հանձնաժողովի համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու պահին։ Սույն կետով փոփոխության հետ Սպառողի անհամաձայնության պատճառով Պայմանագրի լուծման դեպքում, Պայմանագիրը համարվում է լուծված Սպառողի նախաձեռնությամբ։

4.6. Հաշվարկային փաստաթղթերի մեջ սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին։

4.7. Պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար ՀՀ օրենսդրական ակտերով սահմանված ժամկետի վաղեմության, որից հետո՝ հաշվարկված տույժի մարմանը։

4.8. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները, որպես կանխավճար, ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը։

5. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.1. Վթարի և այլ արտապլանային աշխատանքների պատճառով առաջացած անջատումներից առաջ Սպառողին չտեղեկացնելու դեպքում Մատակարարը պատասխանատվություն չի կրում:

5.1.1. Սպառողի կողմից Բաշխման ծառայության դիմաց վճարումներ չկատարելու պատճառով էլեկտրամատակարարման դադարեցման դեպքում Մատակարարը պատասխանատվություն չի կրում:

5.2. Մատակարարն իրավունք ունի դիմել Բաշխողին սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելու նպատակով՝

1) սպառված էլեկտրական էներգիայի դիմաց Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված դեպքերում:

6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում Սպառողից պահանջել կանխավճար՝ նախորդ լիարժեք ամիսների համար վճարված գումարների միջինացված մեկ ամսվա լիարժեք վճարի չափով, կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:

6.2. Բոլոր տեխնիկական հարցերը, մասնավորապես՝ էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների, առևտրային հաշվառքի սարքերի (վերստուգիչ հաշվառքի սարքի ապահավաքակցման կամ փոխարինման), Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) հետ կապված և այլ հարաբերությունները կարգավորվում են Սպառողի և Երաշխավորված մատակարարի (Բաշխողի) հետ կնքված պայմանագրով:

6.3. Մատակարարը իր պարտականությունների իրականացման համար Սպառողից կարող է պահանջել որոշ փաստաթղթեր և տեխնիկական տվյալներ, այդ թվում Բաշխողի հետ պայմանագիրը, որից որոշ տվյալները «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ ներկայացնելու նպատակով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, Պայմանագրով սահմանված կարգով:

7.2. Սպառողի կողմից Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.13 տոկոսի չափով:

7.3 Սպառողը պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացրած տեղեկությունների

(փաստաթղթերի) հավաստիության և ամբողջականության համար:

7.4. Մատակարարը պատասխանատվություն չի կրում Սպառողի կողմից Պայմանագրի 5-րդ 6-րդ կետերով, իրենց ենթակետերով սահմանված տեղեկության չտրամադրման արդյունքում կրած ֆինանսական կորուստների համար:

8. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

8.1. Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Պայմանագրի իմաստով ֆորս-մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:

8.2. Պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

8.3. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

9.1. Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են <u>բացառապես</u> բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում, ինչի վերաբերյալ Կողմերը կամ նրանց կողմից լիազորված աշխատողները կազմում են համապատասխան արձանագրություն և վեճի լուծումը հանձնում են Հայաստանի Հանրապետության դատական համակարգի մաս կազմող ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ մասնագիտացված դատարանների քննությանը՝ օրենքով սահմանված կարգով:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

10.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում էլեկտրական էներգիայի մատակարարման առաջին օրվանից, սակայն ոչ շուտ քան 2026 թվականի -----, և գործում է ---------- ժամկետով: Կողմերը

պարտավորվում են էլեկտրական էներգիայի մատարարարման սկզբի վերաբերյալ կնքել համապատասխան հայտարարություն, որից հետո կսկսվի հաշվարկվել պայմանագրի գործողության ժամկետը: Պայմանագիրը դադարում է դրանում նախատեսված պարտականությունների պատշաճ կատարմամբ:

10.2. Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 1 (մեկ) ամսվա ընթացքում Սպառողի կողմից միացման համար անհրաժեշտ համապատասխան փաստատթղթերի չտրամադրման և/կամ տեխնիկապես միացման համար համապատասխան գործողությունների չկատարման պարագայում համաձայն Պայմանագրի 3.3.-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կարգով Մատակարարը իրավունքն է ստանում միակողմանի լուծել Պայմանագիրը, իսկ տվյալ իրավունքից չօգտվելու դեպքում, կնքման պահից 2 (երկու) ամսվա ընթացքում վերոնշյալ գործողությունների չկատարման և միացում չկատարելու դեպքում, Պայմանագիրը համարվում է լուծված

10.3. Պայմանագիրը կարող է լուծվել՝

1) Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին այդ մասին առնվազն 3 (երեք) ամիս առաջ գրավոր տեղեկացնելով Մատակարարին, բայց ոչ ուշ քան Հանձնաժողովի կողմից հաստատված առևտրային կանոններով սահմանված ժամկետը:

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և Պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Սպառողին 3 (երեք) ամիս առաջ տեղեկացնելու պայմանով:

4) Սպառողի կողմից վճարման ժամկետի ուշացման պահից 15 օր անց:

5) Բաշխողի հետ պայմանագրի լուծման դեպքում:

10.4. Պայմանագրի լուծումը չի ենթադրում Կողմերի դրամական պարտավորությունների մարում:

10.5. Մատակարարման Պայմանագրի լուծումը չի ազատում այդ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից:

10.6. Պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր, պայմանով, որ չեն հակասում Պայմանագրին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:

10.7. Պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ Պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

10.8. Պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

10.9. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ԷՄԱ կանոններով, ինչպես նաև այլ ՀՀ օրենսդրական ակտերով:

11. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

11.1 Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Պայմանագրի շրջանակներում ծանուցումները համարվում են պատշաճ կատարված, եթե դրանք ուղարկված են Կողմին պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ

կամ էլեկտրոնային փոստով՝ ներքոգրյալ էլեկտրոնային հասցեներին, մասնավորապես՝

Մատակարար՝ info@energyprovider.am

Սպառող՝

11.2. Այն դեպքում, երբ Կողմը պատշաճ կարգով չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի/էլեկտրոնային հասցեի փոփոխության մասին, ապա Պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1 Ելնելով էլեկտրական էներգիայի շուկայական հարաբերություններից Սպառողը տեղեկացվում է, որ իրեն կմատուցվեն էլեկտրական էներգիայի Բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ծառայություններ, որը կկարգավորվի Սպառողի և Բաշխողի (Երաշխավորված Մատակարարի) միջև կնքած էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրով, իսկ նշված ծառայությունների արժեքը կորոշվի Հանձնաժողովի կողմից սահմանած սակագնի և մատուցված ծառայությունների քանակի արտադրյալով:

12.2 Հիմք ընդունելով Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի № 517-Ն որոշմամբ հաստատված առևտրային կանոնների նախատեսված այն պարագայում, եթե Սպառողը ունի ինքավար էներգաարատադրողի կարգավիճակ Մատակարարի հետ Հաշվարկային կենտրոն ՓԲԸ-ում Պայմանագրի հաշվառումից հետո Բաշխողի կողմից կխզվի ինքնավար էներգաարտադրության պայմանագիրը, որի պարագայում Բաշխողին առաքված էլեկտրական էներգիայի դիմաց Սպառողին վճարում չի կատարվելու:

13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

13.1 Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածները՝

1) Սպառողի առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին՝ Հավելված 1,

2) Հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 22-ի №ՄՄ/34.3-Մ4-9/5479-2024 գրություն՝ Հավելված 2:

13. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար	Ընդունեց
«ԷՆԵՐՋԻ ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ	
Հասցե ք. Երևան, 0014, Ղափանցյան 3	**Հասցե**
ՀՎՀՀ 08213062	ՀՎՀՀ
Հեռ. 060 866 880	**Հեռ.**

Էլ. Փոստ info@energyprovider.am	**Էլ. Փոստ**
Բանկ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ	**Բանկ**
Հ/հ 2622167438861001	**Հ/հ**
Գործունեության լիցենզիա N 0695	
Տնօրեն Դավիթ Աբովյան	**Տնօրեն**
_____	_____
(ստորագրություն, Կ. Տ.)	(ստորագրություն, Կ. Տ.)

Հավելված 1

Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր

Հաշվառքի սարքի տեղադրման վայրը	Առևտրային հաշվառքի սարք (վերստուգիչ հաշվառքի սարք)										ԷՄՇ առևտրի մասնակցի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվիչների և չափիչ տրանսֆորմատորների ամբողջականության պահպանման պատասխանատու կողմը
	Հաշվիչի				Հոսանքի չափիչ տրանսֆորմատորի			Լարման չափիչ տրանսֆորմատորի			
	տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը	թույլատրելի հոսանքը (Ա)	անվանական լարումը (Վ)	հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը	ճշտության դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը	ճշտության դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**

Մատակարար	**Սպառող**
Տնօրեն Դ. Աբովյան	**Տնօրեն՝**
_____	_____
(ստորագրություն, Կ. Տ.)	(ստորագրություն, Կ. Տ.)

Հավելված 2
Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 522522

«	22	»	նոյեմբերի	2024թ.
№	ՄՄ/34.3-Մ4-9/5479-2024			

«Էներջի Պրովայդեր» ՍՊԸ-ի տնօրեն
Դավիթ Աբովյանին

Պատճենները՝ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետ
Գագիկ Ղազարյանին

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն
Կարեն Հարությունյանին

Ի պատասխան Ձեր 12.11.2024թ.
№ԷՊ-064 և ի լրումն հանձնաժողովի
04.11.2024թ. №ՍՇ/34.3-Մ4-9/5207-2024
գրությունների՝

Հարգելի պարոն Աբովյան,

Շուկայի կառավարման ծրագրով (ՇԿԾ) ներկայացված վճարման ենթակա էլեկտրական էներգիայի (հզորության) և մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտում (ինչպես նաև դրա արդյունքում կազմված հաշվարկային փաստաթղթում) և մատակարարի սպառողին բաշխողի կողմից մատուցված բաշխման ծառայության քանակի և արժեքի մասին հաշվարկային փաստաթղթում արտացոլված մեծությունների անհամապատասխանության առնչությամբ «Էներջի Պրովայդեր» ՍՊԸ-ի գրությամբ (կցվում է) բարձրացված հարցերի վերաբերյալ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հայտնում է հետևյալը.

1. Գրությամբ բարձրացված 1-3-րդ հարցերի կապակցությամբ հարկ է նշել, որ ՇԿԾ-ի միջոցով՝ ժամային կտրվածքով հաշվառված մեծությունները, որպես ավելի ճշգրիտ, պետք է ընդունելի լինեն կողմերի, այդ թվում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի համար:

2. Ինչ վերաբերում է գրության 4-րդ և 5-րդ հարցերով բարձրաձայնված՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից բիլինգային ծրագրի մշակման ավարտից հետո մինչ այդ եղած տարբերությունների մասով վերահաշվարկի իրականացմանը և որակավորված սպառողի կարգավիճակ ստացած կամ մատակարարի հաշվեկշռման խումբը փոխած սպառողներին շտկված հարկային հաշիվների ներկայացմանը, ապա հաշվի առնելով, որ սպառողներին ներկայացվող հարկային հաշիվների կազման համար հիմք պետք է հանդիսանան ՇԿԾ-ի միջոցով՝ ժամային կտրվածքով ներկայացված հաշվառման տվյալները, վերահաշվարկի իրականացման համար անհրաժեշտ է դիմել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին:

Invalid signature

X

ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Signed by: MESROPYAN MESROP 2203720093

Մ. Մեսրոպյան

Կատարող՝ Լ. Հովհաննիսյան ☎ (015) 58-08-08 (326)